ԱՆՈՒՇԱՎԱՆ ՔԱՋԲԵՐՈՒՆՈՒ ՏԵՐ - ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2022 թ. նոյեմբերի 11-ին կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթի երկարամյա գլխավոր խմբագիր, վաստակաշատ լրագրող, ՀՀ ժուռնալիստների միության անդամ Անուշավան Տեր-Գաբրիելյանը: Նա լրագրողական իր հարուստ գիտելիքներն անմնացորդ նվիրեց ակադեմիական թերթի կայացման դժվարին ու շնորհակալ գործին:

Ա. Տեր-Գաբրիելյանը ծնվել է 1936 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: 1946 թ. ընտանիքով ներգաղթել են Հայաստան: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: 1960-67 թվականներին գրական աշխատանք է կատարել ՀՍՍՀ հասարակական կարգի պահպանության մինիստրությունում: 1967-90 թվականներին աշխատել է ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում՝ շարքային խմբագրից հասնելով հեռուստահաղորդումների ծրագրերի տնօրենի պաշտոնին:

ԳԱԱ համակարգում նա աշխատում էր 1994 թվականից՝ սկզբում որպես թերթի գլխավոր խմբագրի տեղակալ, իսկ 2009 թվականից «Գիտություն» թերթի գլխավոր խմբագիրն էր: Թերթում նա հաճախ էր հանդես գալիս (երբեմն՝ անստորագիր) հեղինակային հոդվածներով, որոնցում հստակ ընդգծվում էին լայնախոհ մտավորականի ու քաղաքացու մտահոգությունները մեր ժողովրդի ու երկրի առջև ծառացած խնդիրների վերաբերյալ: Նա խմբագրական գործունեությանը զուգընթաց երկար տարիներ դասավանդել է ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրատուրայում՝ իր մասնագիտական փորձը փոխանցելով ապագա լրագրողներին:

ԳԱԱ համակարգում շուրջ երեք տասնյակ տարիների ընթացքում Ա. Տեր-Գաբրիելյանի աշխատանքային գործունեությունը գնահատվել է ըստ արժանվույն, նա պարգևատրվել է ԳԱԱ նախագահության «Գովեստագրով» և «Վաստակագրով»:

Ա. Տեր-Գաբրիելյանին բնորոշ էին համեստությունը, պատասխանատվության բարձր զգացումը և սկզբունքայնությունը, նվիրվածությունն իրեն այնքան հարազատ լրագրությանը: Նրա հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների սրտերում և թերթի ընթերցողների շրջանում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ